ԱԶԳԱՑԻՆ

ԲԵՐԿՐԱՌԻՄ ՆՊԱՏԱԿ ԵՒ ՆՈՒԻՐ ԳԵՐԱՊԱՏԻՒ ԳԵՈՐԳ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԵՀԱՊԵՏԵԱՆՑ

Աստրախանայ Հոգեւոր Կառավարիչ Գերապատիւ Գէորգ Ա. Արքեպիսկոպոսն Լեհապետեանց՝ Արբաղնապոյն Կաթողիկոսի ամենայն Հայոց անձկութեանց և պատուիրանաց հանձնայն՝ Աստրախան քաղաքի մէջ Հայ մանկանց համար դպրոցներ հիմնելէն և հիմնուածները և արդէն հաստատուածները բարեկարգ հոգաբարձութեանց միջոցով արդիւնաբեր և յառաջադէմ վիճակի ենթարկելէն զկնի, այս օրերս կըմուտայ հոյ օրիորդաց համար, և այն ապրատ ծնողաց զաւակներ, մի դպրոց բանալ արդէն Ս. Կատարինէ եկեղեցւոյ սրահին մէջ գրաւուած հին դպրոցը յատկացնելով։ Իսկ դպրոցին պէտք եղած առ այժմ մի արժանաւոր դասախօսակի համար յատկացուցած երկու հարիւր ռուբլեաց անբաւական գրաւելիքը կրկնիսկ և կը ցանկայ բարեյօժար կամաք՝ ամի ամի հարիւրական ռուբլի ընծայել իւր անձնական արդիւնքէն յօգուտ և ի յառաջադիմութիւն յիշալ օրիորդաց դպրոցին։

Ուստի Ս. Եկ. Կաթողիկոսը՝ օրիորդաց դպրոցին հաստատութեան հրամանին հետ բարեհաճեցաւ յատկապէս օրհնութեան և գոհունակութեան կոնդակ ուղղել առ Նորին Գերապատուութիւն։

Այժմուս մեր Աղգի կարօտութիւն և անհրաժեշտ կարեւորութիւնը դպրոցաց յաղագս երկսեռ հոյ մանկանաց դաստիարակութեան և լուսաւորութեան, մանաւանդ յաղագս օրիորդաց, որք յապագային մայրեր լինելով, անշուշտ իւրեանց զաւակաց վիճակ իրրև բարեկիրթեալ և բաւական արհեստ ունելոյ ի նէ ազգեցութիւն և արդարան պարտականութիւն կարող են ունենալ և պէտք են ունենալ։ Վասնորոյ այդպիսի դպրոցաց ոգին՝ դիտաւ և անհրաժեշտ լինելը խնացող Աղգայինք անհնար է, զի այս առիթը կարդացած միջոցում իւրեանց պարոյ մէջ հանդերձ հրճուանք մեծ շնորհակալիք չզգան զկալի Նորին Գերապատուութիւն։ Ուստի Աբաբաթը կը փութայ հրապարակաւ պարզել իւր ջերմ շնորհակալեաց հաւատիքը, և կը բաղձայ միանգամայն և կը յուսայ՝ որ Աստրախանայի մեր սիրելի Աղգայնոց՝ այդպիսի վեհ առիթներով առաւել ևս սկզբոյ և մեծարանաց համակրութիւնքը դրաւած, և ի ձեռն առատաձեռն նպաստից և նուիրաբերութեանց կարող Աղգայնոց՝ վերոյիշեալ օրիորդաց դպրոցը բացած և արդիւնաւէտ յառաջադիմութեան շաւղին մէջ բարեկարգելէն յետոյ, անձամբ բարի օրինակ փայլելով, ձեռնհաս կը հանդիսանայ այլ ևս առելի օրիորդաց դպրոցներ բանալ և հաստատել ոչ միայն Աստրախանայ մէջ, այլ և բոլոր վիճակին մէջ, ուր որ հոյք կը գտնուին։ որով միայն արդարև Նորին Գերապատուութիւնը պիտի կարողանայ իւր սրբազան պարտաւորութեանց գլխաւորը վերնարած տեսնել և մեխիթարուիլ յաւարտին։

Նոսա անտարակոյս եմք, թէ Նորին Գերապատուութեան նման՝ ընդհանրապէս ամենայն կողմ, ուր որ հոյք կը բնակին, ամեն թեմական-Առաջնորդները, Փոխանորդները և Յաջորդները ջան ի գործ անելոնք կաշխատին և պարտաւոր են աշխատիլ իւրեանց խնամոց յանձնեալ ժողովրդոց մէջ՝ քաղաքներում և գիւղերում արական սեռին հետ գտնեա հաւասար իգական սեռին համար ևս դպրոցներ բանալ և հաստատել

եկեղեցեաց սրահից մէջ. որպիսի ճգանց շնորհիւ, և այն կանոնաւոր և բարեկարգ եղանակաւ՝ միայն կարելի է կրթեալ և ուսեալ մայրեր պատրաստել։

Այս առթիւ արժան կը համարինք Գերապատիւ Գէորգ Ս. Եպիսկոպոսի Վ. Հայեանանց առ Վ. Հայրապետ Կաթողիկոսն ուղղած (հոկտ. 18 ամսաթուով և 400 համարով) Յայտարարութիւնէն հետևեալ պարբերութիւնը հաղորդել մեր Ընդայնոց։

«Իսկ արդիս յատկապէս հոգեկան պարտաւորութիւն դնելով յիմ վերայ, դիտաւորեցայ թէ Տեառն իսկն կամք և թոյլատրութիւն լեցի՝ Ձերդ Վ. Հայրապետութեան Օծութենէ բանալ զԳպրոցս՝ ի պէտս աղքատ ծնողաց օրիորդացն քան և հինգ անձանց, անդր, ուր արդիս ուսանին մանկունք քառասնից չափ մերձ առ Պատարիկ Եկեղեցի Բաղաքիս. քանզի Պատուարժան Հոգաբարձուք ծխական դպրոցին՝ ի մէջ պարապի նոյն Եկեղեցւոյ՝ ի նշանագրեալ տեղին՝ Ձերդ Օծութենէ ձեռն արկին շինել զնոր Գպրոցս յանուն Վ. Հայրապետութեան Ձերոյ. որոյ հիմն օրհնեցաք յայսմ եօթնեկիս՝ ի 16-ն ամսոյս. ուստի զկնի աւարտելոյ նոր շինութեանց հին Գպրոցն մնայ պարապ և դատարկ. ուրանոր ցանկալի է զետեղել զաղջկունս տնանկ և չքաւոր գ'ըդաստանաց՝ որք մերձ բնակին նոյն Եկեղեցւոյն յանձնելով միոյ բարեկրոն անձին դաստիարակի, որպէս զի ուսցին ճանաչել զեղանակ և զձև Խաչ հանելոյ յերեսս իւրեանց. ինքնայայտ է զի յետ՝ ի բաց բառնալոյ զմասն՝ ի պաշտամանդրամ եկեղեցականաց ըստ կտակին, երկու հարիւր ռուբլեով դժուարին է գտանել անձն՝ որ բաւական լեցի կատարել զպաշտօն ուսուցչի. որոյ և մի մասն գործադրեալ՝ ի կարևոր պիտոյս այնորիկ այնէ, փառելափայտի, ջրոյ, ծառայի որ հաղիւ թէ մնայ մի հարիւր և յիսուն ռուբլի. առ յառաջադիմութիւն գործոյն նուաստութիւն իմ բարեյօժար գտանի ամի ամի ընծայել նոյն Գպրոցի օրիորդաց զմի հարիւր ռուբլի յօգուտ նոցա, որով լրացի երեք հարիւր ռուբլի. ոչ ձանձրացայց հրաւիրել և զոմանս՝ ի բարեպաշտից՝ ի տարեկան մասնակցութիւն նուիրարերութեանց. և այս դպրոց ևս պարտի պահպանել ընդ Հոգաբարձութեամբ ծխական Գպրոցաց Բաղաքիս, որք ջերմեռանդ են յայսպիսի հրաւիրանս. առ այս ամենախոնարհաբար խնդրեմ համաձայն աշխարհահռչակ բաղձանաց և ցանկութեանց Վ. սեմատիպ Տէրութեանդ, հաստատել օրհնութեամբ և հրամանաւ որում սպասեմք»։

Բողոք Յերևանայ

Անցեալ տարի Երևանայ Փոխ.-Թեմակալին յայտարարութեամբ՝ յօգուտ և՝ ի նպաստ տեղւոյն Օրիորդաց Գպրոցի՝ Հոգևոր Իշխանութեան կոչմանէ թոյլատրեալ Թատրոնական Ընկերութիւնը՝ իւր ներկայացումները աւարտելէն զկնի կերևի թէ ցարդ ամենևին և ոչ մի հաշիւ ներկայացուցած չէ՝ Ընդայնոց։ Ուստի այս մասին Պ. Ա. Գուլամիրեանցէ մի բողոք ստացանք այս օրերս հանդերձ խորհրդածութեամբք ինչ՝ հրատարակելու խնդրանօք։

Առ այժմ այսքան կը յայտնենք և կը հրաւիրեմք Թատրոնի Ընկերութեան Ընդամբը, որպէս զի մինչև յունուարի 25-ը յառաջակայ նոր տարւոյ՝ թող փութան